

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Чукчум.



24 SEP 2010

633. 41

Q - 76

# ԳԱՐԱՎԱՆԻ ԿԱՄՊԱՆԻ



ՀՅՈՒՅ ՀՅՈՒՅ ԿՈՎՈՒՅ  
ԿԵՐԱՎԵՆԵՑԵՐԵՐԵՐՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅՆ  
ԴՐԱԳԱՐԱՆ Խ 33 (123)

Զ. Ա.ՕՏՎԱԾԱՐՅԱՆ

Կ Տ Ա Վ Ա Տ

ՊԵՏՐՈՍ  
ՅԵՐԵՎԱՆ

1·9·3·1

15 FEB 2013  
19.052  
33.41  
2-76

ՀԱՅՀ ՀՈՊ ԺՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒԼԵՑՆԵՍԵՍՎԵՆ ՀՅԵՐԱՄԱՏՁԵԼԻ ԴՐՅԴԲԲՆ № 33 (123)

Զ. Ա.ԱՏՎ.Ա.ՅԱՏՐՅԱՆ

# ԿՏԱՎԱՏ

33939

ՊԵՏՀՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

## ԿԱԱԼԱՏԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԶ ՄՈՏ

Կտավատար (վուշը) մարդկութիւնը հայտնի յե շատ  
հին ժամանակներից։ Առաջներում, յերբ բամբակը գեռ  
հայտնի չեր, կտավատը միակ տարածված թելատու կուլ-  
տուրան էր։ Նրանից ելին պատրաստում բոլոր անհրա-  
ժեշտ գործվածքները։

Արտ մշակութիւնը, ներկայումս ել խոշոր տեղ ե  
րոնտամ թե մեզ մոտ և թե արտասահմանում, մանավանդ  
ահազին նշանակություն ունի կտավատը Խորհրդավին  
Միութիւն տեքստիլ արդյունաբերության համար։ Ինկատի  
ունենալով վերջինիս հսկա պահանջը հում նյութի նկատ-  
մանը։

Եքս տեսակետից Հայաստանի համեմատաբար խոնավ  
լեռնացին շրջաններում։ (Կարմիր գյուղ, Դիլիջան, Լոռի  
և այլն) կտավատի մշակութիւնը կարող ե փորոշ դեր  
խագալ։ Թանավանդ, վոր սրա հետ ալստեղի գյուղացիու-  
թյունը ծանոթ ե։

Ճիշտ ե, մեզ մոտ չեն ստացվի կտավատի այնպիսի  
տեսակները, վորոնք շատ լավ և նուրբ թել են տաղիս։  
Ստկան մենք կարող ենք ստանալ մեծ տոկոս ձարպեր և  
միջակ գորակի թել։

Ներկայումս, յերբ գրված ե գյուղի սոցիալիստական  
վերակառուցման ինդիքը։ Յերբ մենք մանր անհատական  
անտեսությունները վերացնում ենք և ստեղծում ենք  
խոշոր կոլեկտիվ և խորհրդավին անտեսություններ, կտա-  
վատի մշակութիւն ինդիքը մեզ մոտ ավելի յե հեշտա-  
նում։ Վորովհետեւ լայն հսարավորություններ են ստեղծ-  
վում, մեքենայացման յենթարկել, թե մշակման և թե  
ետագա վերամշակման աշխատանքները։

Հրատ. № 1578

Գրառեպար № 6315 Պատվեր № 1758 Տիրաժ 6000

Պետհրատի տպարան Յերևանում

## ԻՆՉ Ե ՏԱԼԻՍ ՄԵԶ ԿՏԱՎԱԾԸ

Կտավատը մշակում են գաճապան նպատակների համար. նա տալիս է, թել, ձեթ, քուսպ, և աղն:

Կան կտավատի այնպիսի տեսակներ. վոր միայն թել են տալիս, կան և միայն ձեթ տվողներ:

**Մեզ համար նպատակահարժար**  
ե մշակել նրա այնպիսի տեսակները, վորոնք թե մեծ տոկոս լուղ ունեն իրենց սերմերի մեջ և թե բավականին թել են տալիս:

1. Թելը.—**Ստանում են կտավատի ցողուններից:** Բուլսի կեղեի տակ կան հատուկ թելեր, վորոնք կոչվում են լուբ: Ահա այդ լուբն է, վոր տալիս և թելը:

**Յուղը-ձերը.**—ստացվում է կտավատի սերմերից: Այդ սերմերի մեջ, մոտ 35 տոկոս լուղ կա: Այդ լուղը ստանալու համար սերմերը մամլում են:

Կտավատի ձեթը կարելի լի շատ նպատակների համար գործ ածեր:

Նա մեծ նշանակություն ունի ներկեր պատրաստելու համար, վորովինեան շատ շուտ չորանում է: Այդ ձեթերից յեփում են ոլիֆա կոչված յուղը, վորը շինարարության մեջ խոշոր դեր է խաղում:

Բացի սրանից, կտավատի ձեթը տեղ տեղ գլուղացիները՝ վործ են ածում ուտելու համար: Քուսպը. —**Ձեթը հանելուց հետո մամուլի մեջ մնում է քառապը:** Այդ քուսպը շատ լավ կեր է անասունների



Նկ. № 1. Կտավատ

համար: Ձեթե կաթնատու կովին քուսպ տանք նա իր կաթի քանակը կավելացնի: Քուսպով կերակրած կովի կաթից պատրաստած կարաղը ավելի լավ վորակի յել լինում: Այս նրանից ե, վոր քուսպը իր մեջ ունի շատ սննդաբար նյութեր: Միջին հաշվով նրա մեջ կա 34 % սպիտակուցներ, 7—15տոկ. յուղ, 30—40 տոկ. ածխաջրեր և աղն: Ինչպես տեսնում ենք սա շատ ուժեղ կեր է հանդիսանում:

## ՀՈՂԸ ՅԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՈՒՄԸ

Կտավատը այնքան ել պահանջկոտ չե դեպի հողը: Թեպետ ասում են, վոր նրան պետք ե անպայման խոպան (խամ) հողերում ցանել, բայց նա շատ լավ կարող ե աճել նաև յերկար տարիներ մշակած հողում: Ասհրաժեշտ է միայն, վոր այդ հողերը կանոնավոր մշակման լինթարկեն, և վոր նա այնքան ել աղքատ չլինի սննդանյութերով:

Կտավատը լավ չի աճում կիսաճաճալին խոնավ «զինա» հողերում: Վատ ե զնում ծանր կավալին և չոր քարքարոս հողերում: Լավ չի կտավատը մշակել նաև կրաքին հողերում, վորովինեան այդ դեպքում ստացված թելը չուտ կտրափող է լինում:

Վորովինեան կտավատը բավական քանակությամբ խոնավություն ե պահանջում, ապա ուրեմն պետք ե հողը վարել աշնանից: Վորպեսզի աշնան անձրեները և ձմեռվաճան խոնավությունը ամբողջովին ծծվեն և մնան հողի մեջ:

Աշնանը հերկ կտավարելը տնտեսության համար աշխատանքների գասավորման տեսակետից նույնպես վորոշ նշանակություն ունի: Դրանով գարնան աշխատանքները ձմեռամբ կպակասեն, վորը շատ ցանկալի յել:

Ձեթե անտեսությունը հնարավորություն ունի շատ ցանկալի յել, նախքան աշնան հերկը՝ ամառը թեթև խո-

եանահերկ կատարել: Դրանով մասամբ կպահպանվի հողի միջի խռնավությունը: Բացի այդ մինչև աշնան հողի միջի մոլախոսերի սերմերը կծեն, և տշնան հերկը կատարելիս մենք այդ մոլախոտերին կվոչնչացնենք: Մոլախոտերին վոչնչացնելը շատ խոշոր նշանակություն ունի, վորովհետև կտավլատը իր սկզբնական շրջանում շատ գոնդադայ ե աճում և մոլախոտերը նրան կարող են «Փեղպել»:

Աշնան հերկը պետք ե կատարել 4-5 վերշտկ խորոշամբ:

Խուսաստանի գանազան փորձադաշտերում կտաված փորձերը ցուց են տվել, վոր աշնան հերկը կտավատի մերքը բարձրացնում է մոտ 20 տոկոսով:

Յեթե աշնանը հողը լավ, խոր հերկված ե, գարնոնը ացես կարիք չկա հերկելու: Բավական ե միայն մի քանի անգամ փոցին և արդեն հողը պատրաստ ե ցանքախ համար:

Գարնանը նորից հերկելը (կրկնահերկը) այն վասար կարող ե տալ, վոր հողը իզուր կշորանա:

## ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Միենուն հողամասում մի քանի տարի շարունակ կտավատ ցանելու դեպքում, քանի գնում, նրա բերքը պակասում է. իսկ վորակն ել վատանում: Մըս պատճառը հետեւանելն են.

1. Ամեն տարի կտավատը հողից վերցնում է նույն սննդանյութերը: Քանի գնում ե հողի մեջ դբանք պակասում են: Կտավատը չի կարողանում լավ մնին և լրիվ բերք տալ:

2. Մի քանի տարի նույն հողում կտավատ ցանելու դեպքում, այստեղ ուժեղ կերպով սկսում են զարդանալ կտավատի վեասատուները, վորոնք կտավատի բերքի պակասելու և վորակի վատանալու պատճառն են գտնում:

Մըս առաջն առնելու համար պետք ե կտավատը

5-6 տարուց շուտ նույն հողում չցանել: Այսինքն պետք ե նրան ուրիշ բռչսերի հետ փոփոխել, կամ ինչպես ասում են. ցանքսաշրջանառություն կատարել:

Մըս համար հողը բաժանում ենք մի քանի մասերի: Ամեն մի մասում ցանում ենք մի առանձին բույս, և ամեն տարի այդ բռչսերի տեղերը փոխում ենք վորոշ հերթականությամբ: (Յեթե տնտեսության մեջ մի վորեն բռչսի կարիքը մեծ ե, կարող ենք 2 և ավել մաս արտօնագրել նրան):

Որինակ—մի հողամասում ցանել ենք վիկ, մկուսում՝ ցորեն, յերրորդում՝ կարտոֆիլ, չորրորդում՝ կտավատ և այլն: Մյուս տարի ցանում ենք այս նույն բռչսերը, բայց վոչ նույն հողամասերում, այլ տեղերը փոխում ենք: Բայց փոխում ենք այնպես, վոր բոլոր բռչսերն ել իրենց զարգացման համար զտնեն լավ պայմաններ: Այն մի բույս իր նախկին տեղը վերադառնում է միայն մի քանի տարուց հետո: Յեկ վորովհետև տարրեր բռչսեր, տարբեր սննդանյութեր են վերցնում հողից, հողը միակողմանի չի ոգտագործվում և մենք ամեն տարի յել լավ բերք ենք ստանում:

Կտավատը շատ լավ ե գնում, յերբ նրան աեզավորում են 2-3 տարվա յերեքնուկից հետո, կամ յեթե այդ շրջանում յերեքնուկ չի մշակվում՝ վիկից հետո և այն:

## ԻՆՉՈՎ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼ ԿՏԱՎԱՏԸ

Կտավատը չունի լավ զարգացած արմատներ, և նա հողից վերցնում է հեշտ լուծվող սննդանյութեր:

Կտավատի բերքը հավաքելիս նրան արմատներով են հանում հաղից: Ուրեմն նա հողում վոչինչ չի թողնում:

Յեթե ցանում ենք ցորեն, վարի և այլն, նրանց հրնակուց հետո գոնե արմատները մնում են հողում փթում են և մասամբ հարստացնում են հողը սննդարար նյութերով:

Վորովհետեւ, կտավատը հողին վոչինչ չի վերսպարձ-նում, այդ պատճառով շատ մեծ նշանակություն ունի կտավատից առաջ հողը պարարտացնելը:

Կտավատի ցողունների մեջ մեծ քանակությամբ կալիում կա—ուրեմն նա հողից շատ կալիում է վերց-նում, հետևապես պետք է հողը կալիումով պարարտաց-նել: Բացի այս, կտավատի սերմերի մեջ կա ֆոսֆոր, ուրեմն պետք է ֆոսֆորով ևս պարարտացնել:

Այս տեսակիտից շատ լավ պարարտանյութ է մնխիրը: Նրա մեջ կա և կալիում և ֆոսֆոր: Մոխիր՝ մեր գյուղա-ղացիներ շատ ունեն, այնպես վոր լրիվ կրավարաբի նրանց: Անհրաժեշտ է միայն այդ մոխիրը լավ պահել:

Մոխիրը պետք է անպայման ծածկի տակ լցնել, փո-րովհետեւ յեթե մնում է գուրսը անձրել նրա միջի ար-ժեքափոր նյութերը լուծում տանում ե, և մոխիրը զրբկ-վում է աննպարար նյութերից: Մեկ հեկտարին պետք է տալ 50—80 գութ մոխիր:

Շատ լավ արդյունք է տալիս, յեթե կտավատը պա-րարտացնում ենք հանքային պարարտանյութերով:

Գոմազրով նույնպես կարելի յե պարարտացնել, միայն պետք է գոմազրը տալ նախորդ բույսին: Ալսինքն կտավատը ցանելուց մեկ տարի առաջ: Վորովհետեւ, յե-թե գոմազրը տանք անմիջապես կտավատին, դրանից նա շատ ուժեղ կածի և կպարկի:

Յեթե կտավատը ցանվում է՝ յերեքնուկից, առաջու-րից, վիկից, կորնզանից հետո այդ գեպում կարելի յե հողը չպարարտացնել:

Վորովհետեւ, այս բույսերը ունեն շատ զարգացած արմատներ, վորոնք, նրանց հնձելուց հետո մնում են հո-ղում, փթում են և ել ավելի պարարտացնում հողը:

### ՅԵՐՔ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՑԱՆԵԼ

Յանեսի ժամանակը.—Կտավատը տարբեր արջաններում տարբեր ժամանակ պետք է ցանել: Զի կարելի մի վորոշ ժամանակ սահմանել և ամեն տեղ այդ ժամանակ ցանել:

Որինակ. չոր և տաք արջաններում պետք է ավելի շուտ ցանել, վորպեսզի նա ոգտագործի գարնան խոնավու-թյունը:

Սովորաբար սարերում ցանում են մալխսի կեսերին, կամ, վորոշ տեղեր նաև վերջերին: Շատ ուշ ցանել չի կարելի, վորովհետեւ այդ գեպում նա ուշ կհասնի և նրա թրջոց գնելու և թելը ստանալու շրջանը վատ ժամանակ կընկնի: Բացի այս, շատ ուշ ցանած կտավատի ծիլերը ավելի շուտ են տուժում միջաններից (լվիկներից):

Յանեսի խռովիունը.—Խոշոր նշանակություն ունի, նա-յած թե ինչի համար է ցանվում կտավատը:

Յեթե ցանվում է յուղ ստանալու համար ապա այդ գեպում պետք է ցանել նոսր: Վորպեսզի բույսերը շատ լայս ստանան, մեծ արածություն ունենան իրենց արա-ժաղբության տակ, լավ ճյուղավորվեն ու շատ բերք տան: Իսկ յեթե ցանվում է թել ստանալու համար, այդ գեպում պետք է խիտ ցանել: Վորովհետեւ ինչքան խիտ է ցանված, այնքան նա ավելի յե յերկարում և քիչ ճյու-ղեր տալիս: Թելը ստացվում է յերկար, նուրբ, ամուր, և չի կարփում: Բայց և չի կարելի շատ խիտ ցանել, վորով-հետեւ այդ գեպում կտավատը կպարկի: Սովորաբար լու-զառու կտավատը մեկ հեկտարին ցանում են 30—50 կիլո (2—3 գութ), իսկ թելատուն՝ 120—160 կիլո (8—10 գութ):

Ենշպես ցանել կտավատը.—Սովորաբար գյուղացիները ցանում են շաղացան, բայց դա շատ վատ է: Թե յուղա-տու և թե թելատու տեսակները պետք է շարքացանով ցանել: Լավ վորակի թել ստանալու համար անհրաժեշտ է, վորպեսզի կտավատի ցողունները հավասար բարձրու-թյան և միենույն հաստության լինեն:

Յեթե ցանվում է շաղացան սերմերի մասը խոր և ընկնում մլուս մասը յերես: Խոր ընկած սերմերը ուշ են ծլում և ցածը ու նվազ բույսեր են ստացվում, իսկ յերես

ընկածները շուտ են ծլում և շուտ են հասնում: Բացի սրանից շաղացանի գեպում սերմերը մի տեղ խոր են ընկնում, մյուս տեղ նոսր: Այս պատճառով պետք է անպայման շարքացանով ցանել, վորոշ բոլոր սերմերը միևնույն խորության ե ցանում, և իրարից հավասար հեռափորության վրա յե դասավորում: Բացի այս, շարքացանը նաև հեշտացնում է աշխատանքը: Շարքացանով ցանելու գեպում հեշտացնում ե նույնպես և քաղիանը, վորը կտավատի համար շատ մեծ նշանակություն ունի:

Սերմերը պետք ե ցանել 2-3 սանտիմետրից վոչ խոր: Ավելի խոր ցանելու գեպում կտավատի նույն ձիւերը դժվարությամբ են դուրս գալիս հողի միջից:

### ԽՆԱՄՔԸ

Ցանելուց 5-6 որ հետո կտավատը ծլում է: Ակզենական շրջանում նա աճում ե բավականին դանդաղ: Արտում ուժեղ կերպով զարգանում են մի շարք մոլախոտերեց: Մեզ մոտ, կտավատի մեջ տարածված մոլախոտերից են սորեկը, խարդալը, սկուկը, բողկուկը, պոչուկը և այլն: Այդ մոլախոտերը շատ ուժեղ կերպով աճում են և կարող են «խեղդել» կտավատին: Բացի այս, յերբ նրանք կտավատի հետ միասին մեծանում են, հետագայում, թել պատրաստելու ժամանակ, կարող են խանգարել:

Այս մոլախոտերից ազատվելու համար անհրաժեշտ է մի շարք միջոցներ ձեռք տոնել: Ամենակարենը աշխատանքներից մեկն այն ե, վոր սերմացայ կտավատը պետք ե մաքել մոլախոտերի սերմերից: Այդ աշխատանքը կտարում են հատուկ կտավատի սերմագտիչներով: Կարելի յե մաքրել նաև տրիերներով: Բայց ինչքան ել զտենք, ելի նրա մեջ վորոշ սերմեր կմնան: Բացի այդ, մոլախոտերի սերմեր կան նաև հողի մեջ: Այնպես, վոր կտավատը ցանելուց վորոշ ժամանակ հետո, դաշտում բավականին շատ մոլախոտեր են դուրս գալիս: Դրանցից ա-

զտավելու համար, յերբ կտավատը մոտավորապես 15 սանտիմետր (մեկ թիզ) բարձրություն ունի պետք և քաղիանել:

Ռուսաստանի վորոշ փորձադաշտերում կատարած փորձերից յերկում ե, վոր մեկ անգամ քաղիանելը, բարձրացնում է կտավատի բերքը 90 տոկոսով (մոտ մեկին մեկ):

Մեկ անգամ քաղիանելը բավական է, միան պետք և լավ քաղիանել:

Այս քաղիանը կատարելուց հետո, ալիս վոչ մի աշխատանք չի պահանջվում մինչեւ համարը:

### ԿՏԱՎԱՏԻ ՎՆԱՍԱՏՈՒԵՐԸ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԵՐԸ

Կտավատը ունի մի շարք վնասատուներ, վորոնք վորոշ դեպքում բավականին մեծ վնաս են պատճառում նրան: Վնասատուներից հաճախ պատահում են լիմիկները: Սրանք յերեսում են գարնանը և ուտում են կտավատի նոր, մատաղ տերեները: Սրանց վնասը ավելի շատ և լինում, յերբ կտավատը ավելի ուշ և լինում ցանված:

Մեծ վնաս և պատճառում նաև կտավատի թրթուող (վորզը), վորը ուտում ե սրա տերեները և ծաղիկները:

Այս բոլոր վնասատուներն ել իրենց ձկերը գնում են զանազան վայրի խոտերի վրա, վորտեղ զարգանում են և այն տեղից անցնում կտավատին:

Այս տեսակետից մեծ նշանակություն ունի արտերի միջնակների մաքրելը և այնտեղի անպետք խոտերի վոչընչացնելը: Դա հնարավոր է սիամն կողեկտիվ անտեսություններում, վորտեղ բոլոր հողերը միացված են իրար, հողերի միջի սահմանների կարիքը չի լինում. հետեւալես այդ սիջնակները կարող են վարել, և այդտեղի խոտերը ամբողջովին կվաշնչանան:

Կտավատը վնասավում է հաճախ և սունկալին հիվան-

դություններից, վորոնցից ամենատարածվածն է կտավա-  
սի ժանրը:

Կտավատի ծաղկելու ժամանակ նրա տերեների վրա  
առաջանում են դեղին բծեր:

Վորոշ ժամանակից հետո ցողունի ցածի մասում սե  
բծեր են առաջանում: Ժանգը բավականին վնաս և տա-  
լիս: Սրանով վարակված բույսերից շատ թուլ թել է  
ստացվում, և նա շուտ ե կտրտվում: Այդպիսի թելից  
գործած կտորը իր վրա սե բծեր ե ունենում:

Յերբ ժանգը լերևաց, պետք ե բույսերը շուտ հա-  
վաքել, վորպեսզի նա շատ չտարածվի և մեծ վնասներ  
չտա: Այն շրջանում, վորտեղ ժանգ ե յերևացել ավելի  
լավ ե վորոշ ժամանակ կտավատ չցանել:

Կան և մի շարք այլ սունկացին հիվանդություններ:  
Ընդանրապես սունկային հիվանդությունների դեմ  
կռվելու համար մեծ ուշաղրություն պետք ե դարձնել  
սերմի վրա: Պետք ե ցանել առողջ սերմեր: Հիվանդ սեր-  
մերը հեշտությամբ կարելի յե ճանաչել, նրանք ավելի  
մուգ գույն են ունենում, մակերեսը խորդ ու բորդ ե  
լինում և լավ չեն փայլում:

## ԵՐԻ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՀԱՎԱՔԵԼ ԿՏԱՎԱԾԸ

Հավաքելու ժա-  
մագակը կտավատի հավաքելու ժամանակը  
շատ տարբեր ե, նայած նրան, թե  
ինչի համար ե նու մշակվում:

1. Յեթե ցանվում ե միայն թելի համար, և ուզում են-  
շատ նուրբ թել ստանալ այդ դեպքում հավաքում են  
ծաղկելուց 5-6 որ հետո (ինչպես որինակ Բելգիայում,  
Իրլանդիայում և այլն):

Այսպիսի կտավատը տալիս ե շատ բարակ մետաք-  
սանման թել, բայց բերք քիչ ե ստացվում: Բացի դրանից  
սրա սերմերը դեռ նոր են կազմվում և խակ են լինում:

2. Յերբ ցանվում ե միայն ճարպ ստանալու համար  
(ինչպես արևելյան շատ լերկրներում), հավաքում են շատ  
ուշ, յերբ բույսը ամբողջովին չօբացել է, սերմերը լավ  
հասել են: Բուլսը շարժելիս սերմերը զլխիկների մեջ վա-  
րոշ խշխոց են հանում: Այս դեպքում ստացվում են շատ  
լավ սերմեր, վորոնք շատ յուղ են տալիս, բայց վատ  
և կոպիտ թել:

3. Յերբ ուզում են ստանալ և յուղ և թել: Հայտնի  
յեն կտավատի հատուկ տեսակները, վորոնցից կարելի յե  
միաժամանակ թե յուղ և թել թել ստանալ: Սովորաբար  
այս տեսակները տարածված են, արևելյան լերկրներում:  
Այս դեպքում, բուլսերը պետք ե հավաքել այն ժամանակ  
յերբ ցածրի տերեները թափվել են և զլխիկները ոկան  
են դեղնել: Արակի ընդհանուր տեսքը դեղին ե: Այսպիսով  
ստացվում ե լավ անուր թել և լավ սերմ: Այս դեպքում  
հավաքելու ժամանակ սերմերը դեռ լրիվ հասած չեն լի-  
նում, բայց հավաքելուց հետո վորոշ ժամանակ զլխիկնե-  
րի մեջ մնալով համար են: Սրանք և լավ սերմացու լին,  
և մեծ քանակությամբ ձեթ են պարունակում իրենց մեջ:

Մեզ համար ամենից լավ ե կտավատը հավաքել հենց  
այս ժամանակի: Վորովինետե մեզ մոտ կտավատի սերմերը  
իրենց մեջ շատ մեծ տոկոս ձեթ են պարունակում, ան  
պես վար միաք չունի հավաքել շատ շուտ և զրկվել ձե-  
թից: Խմաստ չունի նույնպես շատ ուշ հավաքելը, վորով-  
ինետե այդ դեպքում ել մենք չենք ոգտագործում թելը  
վորը նույնպես շատ խոշոր նշանակություն ունի:

Խնչպիս հավաքելու...—կտավատը հավաքում են փոչ թե  
հնձելով, այլ արմատահան են անում: Իսկ յեթե կտա-  
վատը ցանված ե մի միայն յուղ ստանալու համար, այդ  
դեպքում արմատահան չեն անում այլ հնձում են:

Խնչպես վերեռում արգեն ասացինք, լավ թել ստանա-  
լու համար անհրաժեշտ ե, վոր բոլոր բույսերը միենուն

յերկարության լինեն: Աւստի աշխառում են հենց հավաքելիս բաժանել տեսակների, վորպեսզի հետագարում աշխատանքը ավելի չգդվարանա: Այդ անում են հետեւալ կերպ առջեից գնում են մի քանի աշխատողներ, վորոնք հափառում են ավելի բարձր բույսերը: Նրանց հետեւից զնացողները արդեն հավաքում են մնացած ավելի ցածր բույսերը: Այս սորտերի բաժանելը ունի խոշոր նշանակություն: Միատեսակ բույսերից միատեսակ ել թել է ստացվում, վորից և ավելի լավ կտոր ե գործվում:

Արմատահան անելու ժամանակ չի կարելի բույսերի շատ ցածրի մասերից բռնել, այլ մի քիչ վերեից, վոր մոլախոտերն ել նրա հետ դուրս չգան:

Այս ձեռվ կտավատի հավաքելլ չափազանց շատ աշխատող ձեռք ե պահանջում: (Ճեկ հեկտարին մոտ 25—30 բանիոր): Իսկ այն ժամանակ, յերբ պետք ե կտավատը հավաքել, ազատ ձեռքեր տնտեսության մեջ սովորաբար չեն լինում: Յեփրովական յերկրներում: (Ֆրանսիայում, Բելգիայում, Իրլանդիայում և այլն), այդ աշխատանքը մերենայացվում ե: Այստեղ կան հատուկ մեքենաներ, վորոնք արմատներով կտավատը հանում են հողից: Մեզ մոտ նույնպես պետք ե աշխատանքները մեքենայացման յենթարկել: Այդ մեքենաները միայն, խոշոր կոլեկտիվ տնտեսությունները կարող են ունենալ: Մասր տնտեսությունները հնարավորություն չունեն ձեռք բերելու այդպիսի մեքենաներ:

#### ԿՏԱՎԱՏԻ ԼԵՏԱԳԱՎԵՐԱՄԱԿՈՒՄԸ

Արմատահան անելուց հետո, մեկ յերկու որ այդպիս թողնում են, վորպեսզի մի քիչ թառամի: Հետո հավաքում են, բոլորի արմատները հավասարեցնում են, ձողախոտերը միջից ջոկում և խրձեր կապում:

Յեթե հողից հանելիս անմիջապես խրձեր կապենք, վորոշ ցողուններ կարող են կտրվել և դրանից թելը կը կտրտվի:

Խրձերը զույգ-զույգ շարում են ծալքերը դեպի իրար, իսկ արմատները զուրս: Հաճախ դասավորում են մի յերկար փայտի յերկու կողմից: Այսպես շրջում են նրան համար, վոր լավ չորանա: Այսպես թողնում են 5—10 սր: Այդ ժամանակում կտավատը արդեն չորանում է:

Չորացնելուց հետո զլիխիկները ցողուններից անջատում են: Դրա համար զործ են ածում հատուկ մետաղե սանրներ: յերկար ու խիտ ատամներով: Վերցնում են փոքրիկ խրձերով կտավատը և մի քանի անդամ սանրի արանքներով քաշում: Գլխիկները պոկվում են և ընկնում սանրի մլուս կողմը: Մերմացուն այդպես զլիխիկներով ել թողնում են: վորպեսզի ավելի լավ հասունանա, իսկ լուղ ստանալու համար, այդ զլիխիկները կալսում են և նրանցից ստանում սերմը:

Կալսելու համար զլիխիկները լցնում են մի հարթ տեղ և վրայից ծանր գլաններ են գլորում: Կալսում են և այլ ձեռքով: ըայց ամենալավը հատուկ կտավատ կալ սող մեքենաներն են: Մեկ հեկտարից ստացվում է 4—7 ցենտներ սերմ:

Այդ սերմերից մամիելու միջոցով ստացվում է յաւղը (ձեխ) և քուսպ:

#### ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿՏԱՎԱՏԻ ՑՈՂՈՒՆԵՐԻՑ ԹԵԼ ՍՏԱՆՈՒՄ

Մենք տեսանք թե ինչպես են կտավատը ցանում, խնա նում, հավաքում, ինչպես են չորացնում և զլիխիկները ցողուններից անջատում: Այժմ ել տեսնենք թե ինչպես են այդ ցողուններից թել ստանում:

Ինչպես արդեն ասացինք, թելը ստացվում է ցողունի կեղեր տակից անցնող լուրի խրձիկներից: Այդ թելերը վորոշ նյութով կտաված են իրար: Թելը ստանալու համար պետք ե այդ կտաված նյութը քայլքայենք, վորպեսզի

թելերն իրարից բաժանվեն: Դրա համար կտավատի ցողունները թրջոց են դնում:

Մեջոց դնելլ.—թրջոց դնելը կատարվում է մը քանի ձեզով:

Կտավատը կարելի յէ թրջոց դնել թե հոսոյ և թե կանգնած չըի մեջ: Խուսաստանի փորոշ տեղերում, վոչ թե չըի մեջ են դնում, այս փոռում են դաշտուն և նա ցողի ու անձրեի ազգեցոթյան տակ թրջում ե:

Յերբ կտավատի ցողունները դնում ենք ջրի մեջ, ահաւեղ զարպանում են շատ փոքրիկ որգանիզմներ, վորոնք կոչվում են բակտերիաներ: Դրանք այնքան փոքր են, վոր հասարակ աշխով չեն յերեռմ և նրանց կարելի յէ տեսմնել միայն մանրադիտակի միջոցով: Այս բակտերիաները քայլալում են ահա նյութը, վորը կտավատի թելերը իրար և կպցնում: Այս ձեի խմորման միջոցով թելերն իրարից անջատվում են:

Նախքան թրջոցը պետք ե կտավատը տեսակների բաժանել, ինթե այդ սկզբից լավ շեր կատարված: Հաստ ցողունները պետք ե բարակներից ջոկել փորովհետեւ հաստերը ջրի մեջ ավելի շուտ են քայլալում քան բարակ ցողունները:

Ինչպես ասացինք թրջոցը դնում են և հոսոյ և կանգնած ջրում:

Հոսոյ ջրում թրջոց դնելիս, անհրաժեշտ ե, վոր այդ գետը, վորի մեջ դնում են կտավատը, շատ գանդաղ հոսի: Այս գեպը ուղարկելու համար կտավատը շարում են նրա մեջ, բոլոր կողմից շրջապատում են ծղնուսակ, վերից ծանրություն են դնում և թող ում են ջրի մեջ: Այսպես անում են դիմավորապես թելզիալում:

Խուսաստանում ավելի տարածված է կանգնած ջրում թրջոց դնելը: Դրա համար վորում են հատուկ հորեր:

Այդ հորերի պատերը տախտակում են, կամ հաճախ ճիպոններով ու ծղնուներով գործում: Այդ հորերը փորում են ախալիսի տեղում, վոր հնարավոր լինի առվակով ջուր բերել ալդաեղ:

Վերցնում են հատուկ արկղներ, վորն իր բոլոր կողմերից լայն ձեղքեր ե ունենում: Կտավատը շարում են այդ արկղում, ու արկղը դնում հորի մեջ: Հաճախ ուղղակի խրձերը շարում են հորի մեջ: Բայց ավելի լավ է արկղներում անել, վորովհետեւ ալդ գեպը ում աշխատանքը հեշտանում է: Հորը լցնում են ջրով, կտավատի խրձերի վրան ծղնուած են շարում, վերևից ծանրություն են դնում և արդպես թողնում են մինչև ցողունների քայլայինելը:

Սովորաբար 10—15 որ ջրի մեջ թողնելը բավական ե լինում: Բայց կարող ե և ավելի շուտ, կամ ուշ պատրաստ լինել: Յեթե յեղանակը տաք ե, աղա ավելի շուտ ե քայլալում, իսկ յեթե ցուրտ ե՝ ավելի ուշ:


Վորպեսպի իմանած պատրաստ ե թե վոչ, ջրի մեջ դնելուց մի քանի որ հետո պետք ե նմուշ վեցներ վերցնում են մի քանի ցողուն և փորձում են—թելերը հեշտութամբ են անջատվում թե վոչ: Յերբ տեսան վոր ցողունը ծալելիս թելերը հեշտությամբ են բաժանվում փայտից ուրեմն արղեն պատրաստ ե և պետք ե ջրից հանել: Այս փորձը պետք ե ամեն որ կատարել, վորպեսպի ժամանակը շանցնի:

Յեթե ցողունները ժամանակից ավել թողնենք ջրի մեջ, նրանցից ավելի թույլ թել կտացվի:

Այս քայլալումը ավելի արագացնելու համար, յերբեմն ցեմենտե հորեր են շինում, դրանց մեջ տաքայրած ջուր են լցնում և կտավատու լցնում են ջրի մեջ: Այս գեպը ուղարկելու արագ ե անցնում և 4—5 որից հետո նյութը պատրաստ ե լինում:

## ԻՆՉՐԵՍ ԹԵԼԸ ՑՈՂՈՒՆՆԵՐԻՑ ԲԱԺԱՆԵԼ

Թրջոց գնելուց հետո պետք է թելը ցողուններից բաժանել: Դրա համար ջրից հանած կտավատի ցողունները չօրացնում են և տրորում: Տրորելու համար կան հատուկ գործիքներ:



Նկ. № 2. Կտավատի ցողունները արորող մեքենա.

Այդ գործիքը բաղկացած է մի քանի ատամավոր զաններից փորսնք պտտվում են իրար հակառակ (տես նկ. 2): Տրորելուց հետո թելի վրա մնացած են լինում ցողունի շատ մնացորդներ: Այս մնացորդները հեռացնելու համար կան առանձին տեսակի գործիքներ:

Ամենապարզ, գլուղացիական գործիքը ետ մի վայրէ դադայան եւ մի հատուկ զանակ (տես նկ. № 3):

Զախ ձեռքով բռնում են թելը և կախում այդ դաշտահի ձեղքից, իսկ աջ ձեռքով, զանակի բռւթ բերանով խփում են թելին: Այս ձեռվ թելը մաքրվում է ցողունի մնացորդներից:

Վերջին աշխատանքը, գոր կատարում են, ոտ թելի

սանրելն է: Հատուկ սանրերի միջոցով թելը մաքրում են խճճված ավելորդ մասերից, և ստացվում է մաքուր պատրաստի թել: Մեկ հեկտարից ստացվում է 3—6 ցենտիներ պատրաստի թել:



Նկ. № 3.

Ներկայումս Խորհրդավոր Միության մեջ կան կտավատ վերամշակող գործարաններ: Այդ գործարաններում այս բոլոր աշխատանքները կատարվում են մեքենալացված ձեռքեւ Ստացվում է ավելի բարձր փորակի և ավելի շատ թել:



ԳՐԱ 7 ԱՐ.



Յ. ԱՌՎԱՑԴՅԱՐՅԱՆ

Լ Ե Ն

Госиздат ССР Армении  
Эреванъ

«Ազգային գրադարան»



NL0282696

19.052